## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԿԳՆԱՊՁԲ-16/ 35

ք. Երևան «17» «10» 2016թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/ մի կողմից, և քաղաքացի Վ. Կարապետյանի /անձ. AH0256364, 005/ (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ՙՀաղթահարելով դժվարությունները՚ ֆիլմ-ձեռնարկ տեսաֆիլմը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Կատարողը Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

**3.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Կատարողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Կատարողն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Կատարողը պարտավոր է՝**

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 2250000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Հարկային գործակալ է հանդես գալիս ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Քաղաքացի Վ. Կարապետյան |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ք. Երևան, Ա. Հովհաննիսյան 16, բն. 20 Ինեկոբանկ |
| Հ/Հ 900011005890 | Հ/Հ 2050065184711001 |
| ՀՎՀՀ 02512868 | |
| Աշխատակազմի ղեկավար՝ | |
| ----------------------- Ն. Հարությունյան (ստորագրություն) | ----------------------- Վ. Կարապետյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

**Հավելված 1**

<< 17 >> << 10 >> 2016թ կնքված
ՀՀԿԳՆԱՊՁԲ-16/35 գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Գնման առարկա են հանդիսանում տեսաֆիլմերը**
**/այսուհետ՝ Ապրանք/**

<<Հաղթահարելով դժվարությունները>> ֆիլմ-ձեռնարկ տեսաֆիլմը հանդիսանում է <<Սովորում ենք միասին>> ֆիլմաշարի թվով հինգերորդ ֆիլմը:

Ֆիլմը ներկայացնում է Հայաստանի կրթական համակարգում ներառական կրթության ներդրման շուրջ 10 տարվա ընթացքում կատարված աշխատանքի արդյունքը: Ֆիլմում ցուցադրվում են ներառված երեխաների ուսումնական շրջանի անցած ուղին, ճակատագիրը: Իրենց փորձի, կարծիքի, դժվարությունների մասին կներկայացնեն ծրագրում ներառված աշակերտները: Մանկավարժները և ծնողները կկիսվեն համատեղ կատարած աշխատանքի արդյունքներով:

Ֆիլմը ներկայացվում է տեսասկավառակով, տեսասկավառակը պետք է տեղակայված լինի պատյանի մեջ:

Ֆիլմի ժամանակը – 30 րոպե

Տեսասկավառակի տեսակը – ԴՎԴ մեկ երեսանի, տարողությունը՝ 4,7 ԳԲ:

Ֆիլմի ցուցադրումը նախատեսվում է հանրակրթական դպրոցների մանկավարժներին, ծնողներին և նպատակ ունի ներկայացնել ներառական կրթության արդյունքները:

| | |
|---|---|
| Հատուկ նշագրում | Տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: |
| Փոխադրումը և բեռնաթափումը | Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի: |
| Այլ | Պարտադիր պայման է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը (եթե կիրառելի է տվյալ ապրանքի համար: |

| | |
|---|---|
| **Պատվիրատու՝** | **Կատարող՝** |
| ----------------------- Ն. Հարությունյան | ----------------------- Վ. Կարապետյան |

<<Հաղթահարելով դժվարությունները>> ֆիլմ-ձեռնարկ տեսաֆիլմի

բաշխման ցուցակ /2016թ./

| Հ/հ | Առաքման վայրը | Քանակ |
|---|---|---|
| 1. | Երևան /քաղաքապետարանի կրթության վարչություն/ | 150 |
| 2. | Արագածոտն /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 3. | Արարատ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 4. | Արմավիր /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 5. | Գեղարքունիք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 6. | Լոռի /մարզպետարանի կրթության վարչություն/ | 150 |
| 7. | Կոտայք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 8. | Շիրակ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 50 |
| 9. | Սյունիք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 110 |
| 10. | Վայոց Ձոր /մարզպետարանի կրթության վարչություն/ | 30 |
| 11. | Տավուշ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 80 |
| 12. | Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն | 100 |
| 13. | ԵՊՄՀ | 70 |
| 14. | ՀՀ ԿԳՆ ԿԱԻ | 10 |
| | **Ընդամենը՝** | **1000** |

**Պատվիրատու**

---------------------- Ն. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

**Կատարող**

---------------------- Վ. Կարապետյան
(ստորագրություն)

<u>**Հավելված 2**</u>
<<17>> <<10>> 2016թ. կնքված
N ՀՀԿԳՆԱՊՁԲ-16/35գնման պայմանագրի

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը, հազ. դրամ | Նախատեսվում է գնել 2016թ.՝ մինչև դեկտեմբերի 10-ը | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | քանակ | գինը, հազ. դրամ | քանակ | գինը, հազար դրամ |
| 1 | <<Հաղթահարելով դժվարությունները>> ֆիլմ-ձեռնարկ տեսաֆիլմ | հատ | 2.250 | 1000 | 2250.0 | 1000 | 2250.0 |
| | **Ընդամենը՝** | | | | | | **2250.0** |

**Պատվիրատու**
Ն. Հարությունյան

**Կատարող**
Վ. Կարապետյան

Հավելված 3

<< 17 >> << 10 >> 2016թ կնքված

N ՀՀԿԳՆԱՊՁԲ-16/35 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

| Գնման առարկայի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Ենթակա է վճարման ՀՀ 2016թվականի պետական բյուջեի՝ <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակում և ձեռքբերում>> ծրագրից, ընդ որում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | | | 1-ին կիսամյակ | | | 9 ամիս | | | տարի | | | Ընդամենը |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր /մինչև 25-ը/ | |
| <<Հաղթահարելով դժվարությունները>> ֆիլմ-ձեռնարկ տեսաֆիլմ | 4261 | | | | | | | | | | | | 2250.0 | 2250.0 |

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Վ. Կարապետյան